

# ՀԱՅՐԵՆԻՔԸ ՁԵՐ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԻ

Posted on November 15, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Նորիկ Մարկոսյան և Համախոհներ, Լոս Անճելըս, 14 Նոյեմբեր 2013

Թանկագին հայրենակից,

Մեծ եղեռնից դեռ մի դար չանցած և հայաստանյան անկախ պետականության ընդամենը երկու տասնամյակից հետո, մեր հայրենիքը նորից հայտնվել է կործանման եզրին:



Աճող արտագաղթն արդեն իսկ պանդխտության է մատնել 1,5- 2 միլիոն հայերի, իսկ երկրում մնացողներն էլ մաքառում են օրվա հացի, արդարության ու տարրական իրավունքների համար:

Նորիկ Մարկոսյան և Համախոհներ, Լոս Անճելըս, 14 Նոյեմբեր 2013

Թանկագին հայրենակից,

Մեծ եղեռնից դեռ մի դար չանցած և հայաստանյան անկախ պետականության ընդամենը երկու տասնամյակից հետո, մեր հայրենիքը նորից հայտնվել է կործանման եզրին:



Աճող արտագաղթն արդեն իսկ պանդխտության է մատնել 1,5- 2 միլիոն հայերի, իսկ երկրում մնացողներն էլ մաքառում են օրվա հացի, արդարության ու տարրական իրավունքների համար:

Երկիրը հայտնվել է բացահայտ քրեականների ձեռքում, որոնք որպես իշխանություն վերարտադրվում են իրար հաջորդող ու լկտիորեն կեղծվող ընտրություններով՝ արտագաղթածների հաշվին քվե լրացնելով, խաբեությամբ ու ամեն ընտրողի հանդեպ իրացվող մանրակրկիտ հետապնդմամբ ու շանտաժով:

Վաղուց է հասունացել ժամը ողջ աշխարհի հայության սթափվելու և միջոցներ ձեռք առնելու հայաստանյան ազգակործան իշխանությունների դեմ, սակայն մինչ այժմ արվող բոլոր փորձերն անցել են անարդյունք:

Ավելին, հայության սփյուռքահայ հատվածն ու մասնավորապես նրա երևելի դեմքերը, չեն խորացել հայկական իշխանությունների ազգադավ գործելակերպի մեջ և մշտապես սատարել են ժողովրդին հալածող, երկրի ռեսուրսները թալանող, եղած չնչին տնտեսական ավիրող, մասնագետներին հետապնդող, անոմալ այս իշխանություններին:

Օգնության հայցով դիմելով համայն հայությանն այս օրհասական պահին հուսով ենք, որ այն կընդունվի ըստ պատշաճի, չնայած մեծ է մարդկանց իներցիոն վերաբերմունքը հանդեպ կատարվողը և ընդհանուր մտայնությունն է՝ թե ժամանակավոր դժվարություններ են, դանդաղորեն կհարթվեն:

Ոչ, մենք արդեն անցել ենք վերականգման բոլոր թեթև հնարավորությունների վրայով և կանգնած ենք դեմ-հանդիման պետականության կորստի առջև: Հայաստանն իր տնտեսական ցուցանիշներով, իր քաղաքացու հանդեպ վերաբերմունքով ու զարգացման դինամիկայով արդեն իսկ գտնվում է չկայացված երկրների շարքում: ԵՎ եթե շուտափույթ, կտրուկ ու խիստ քայլեր չձեռնարկվեն, երկիրը կփլուզվի:

Կոչի հեղինակները պատրաստ են ցանկացողներին տրամադրել անհրաժեշտ բոլոր փաստերը Հայաստանի ողբերգական վիճակի մասին:

Դիմելով համայն հայությանը, մենք կոչ ենք անում տեղերում ևս քննարկել ստեղծված վիճակը և գտնել օգնության և միջամտության մասնավոր ուրույն լուծումներ ևս:

Մեր կողմից մենք առաջարկում ենք լայնածավալ, ամբողջական բոյկոտ հայկական իշխանությունների բոլոր քայլերին, նրանց ոչ լեգիտիմության բացահայտումը աշխարհով մեկ և ֆինանսական օգնություն- Հայաստանում իշխանությունների դեմ գոյության կռվի, արժանապատվության վերականգման և իրավունքի պաշտպանության ելած քաղաքացիներին:

Խնդրում ենք, ինքներդ Ձեզ հասու ճանապարհներով օգնություն հասցնել մարտնչողներին ու նրանց ընտանիքներին, որովհետև նրանք հետապնդվում են իշխանությունների կողմից՝ ընդհուպ մինչև նրանց ընտանիքների ֆիզիկական գոյության միջոցների հայթայթման արգելափակումը: Նրանք բռնադատվում են ամեն քայլափոխի և շինծու քրեական մեղադրանքներով դատարապատվում են երկարաժամկետ բանտարկության՝ զրկված լինելով դատական տարրական արդարության հնարավորություններից:

Բանտերը լի են անմեղ մարդկանցով, իսկ իշխանական քրեականները արդեն լկտիորեն և հրապարակա՛վ են ցուցադրում իրենց անպատժելի լինելու քամահրանքը:

Խնդրում ենք, ովքեր կարող են, ծանոթ են, ունեն ուղիներ, դիմեն հայ մեծահարուստներին և համահայկական դրամական օգնության ֆոնդերին, որպեսզի դադարեցվեն բոլոր օգնությունները հայաստանյան իշխանություններին՝ լինի դա նույնիսկ բարեկարգումը, ճանապարհների վերականգնումը, թե իշխանությունների կողմից վերահսկվով անորոշ ծրագրերը:

Ներկա անելիքը մարդկանց, երկիրը կործանող իշխանությունների դեմն առնելն է, աղետալի արտագաղթը կանգնեցնելը և օգնության խողովակները դեպի մաքառող հայ մարդն ուղղելն է:

Խոսքը չի գնում մեծ գումարների մասին: Այլ մարտնչողների ընտանիքներին գոնե նվազագույն կենսապահովման գումարների հատկացնելու մասին է: Ուղղեք ձեր ջանքերը այս նամակը տարածելուն և գործուն հասցեատերերին այն մատուցելու համար, օգնեք ձեզ որպես հայ զավակների և հայությանը՝ որպես ճգնաժամի մեջ հայտնված հարազատ էթնոսի՝ վերագտնելու իրեն, փոխելու իր իշխանություններին և

**ոտքի կանգնելու:**

Մենք՝ սույն նամակի հեղինակներս, որևէ անձնական, ազգային -լոբբիստական կամ այլ նպատակային շահագոգոություն չունենք: Մենք դիտում ենք մեզ որպես միջևորդ Ձեր և համայն հայության միջև՝ իրազեկելու միմյանց և անելու հնարավորն այս ծանրագույն, եղեռնագույժ իրադրությունից դուրս գալու համար:

Խորին հարգանքով առ յուրաքանչյուրդ

Նորիկ Մարկոսյան և համախոհներ

